



ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԱՐԿՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

Թիւ 11/17

Անթիլիաս, 25 Յունուար 2017

Մեծարգոյ
Տիար Գագիկ Յարութիւնեան
Նախագահ
Սահմանադրական Դատարանի
Երեւան

Սիրելի՛ Պրն. Յարութիւնեան,

Հայրապետական օրհնութեամբ եւ ֆրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանքէն: Սեպտեմբեր 21-ին Հայաստանի անկախութեան 25-ամեակին առիթով երբ կը գտնուէինք հայրենիք, ազնիւ գտնուեցաք Մեզի նուիրելու Ձեր վերջին հրատարակութենէն՝ *"Սահմանադրական Մշակոյթ"* օրինակ մը:

Անցնող ամիսներուն, յաճախակի ճամբորդութիւններուն պատճառաւ առիթը չունեցանք մօտէն հաղորդ դառնալու Ձեր այս աշխատասիրութեան: Հիմա որ աւելի մօտէն ծանօթացանք Ձեր այս գործին, կ'ուզենք կարգ մը մտածումներ բաժնել Ձեզի հետ.-

Առաջին հերթին, գրքին խորագիրը ինքնին յստակօրէն կը բնութագրէ բովանդակութեան լրջութիւնը ու այժմէականութիւնը: Պետութեան մը հզօրութեան կոռուարն ու զարգացման եւ յառաջդիմութեան երաշխիքը սահմանադրական մշակոյթի տիրական ներկայութիւնն է: Դուք ճիշդ կերպով կը զանազանէք սահմանադրականութիւնը սահմանադրութենէն: Արդարեւ, սահմանադրութիւնը կը դառնայ ձեւական, երբ ան չէ արմատացած սահմանադրական մշակոյթի մէջ: Հայաստանի Հանրապետութիւնը կոչուած է յատուկ կարեւորութիւն ընծայելու, անցող քսանհինգ տարիներու փորձառութեան լոյսին տակ, սահմանադրական մտածելակերպի ու գործելակերպի կազմաւորման ու ամրապնդման:

Երկրորդ կէտը աստուածային իրաւունքներու եւ մարդկային իրաւունքներու փոխ-առնչութեան ու յարակցութեան կը վերաբերի: Բնականաբար, այս բնագաւառն էն ներս հասարակաց սկզբունքներու ու տուեալներու ներկայութիւնը տիրական է: Միաժամանակ կարելի չէ անտեսել գոյութիւն ունեցող տարբերութիւնները, յատկապէս բարոյական արժէքներու ու իրաւական սկզբունքներու միջեւ, որոնք պատմութեան ընթացքին, նաեւ այսօր, ֆրիստոնեայ աստուածաբաններու մօտ յաճախ յառաջացուցած են հակադիր մօտեցումներ: Իսլամ մտածողութիւնը բոլորովին տարբեր է: Մեր եկեղեցին կրցած է իր կեանքին ու մտածողութեան մէջ բարոյականին ու իրաւականին, կրօնականին ու ազգայինին միջեւ որոշ ներդաշնակութիւն մը ստեղծել: